ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ԱՎԾ առաքելությունը տնտեսական և հասարակական գործընթացների ու դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության համակարգի կազմակերպումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձանց, պետական հիմնարկներին և միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև հանրությանը սահմանված կարգով տեղեկատվությամբ ապահովումն է: Ծառայությունների մատուցման ոլորտի հիմնական գործառույթներն են.

ա) վիճակագրական տվյալների հավաքագրում, մշակում, ամփոփում, վերլուծություն և հրապարակում,

բ) համագործակցություն համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ոլորտում,

գ) վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության մշակում և կատարելագործում,

դ) տեղեկատվության և տվյալների հավաքագրման համակարգում՝ միջազգային ստանդարտների վրա հիմնված համընդհանուր դասակարգման և կոդավորման համակարգին համապատասխան,

ե) վիճակագրական հետազոտությունների կազմակերպում,

զ) մարդահամարների անցկացում 10 տարին մեկ,

է) բիզնես-ռեգիստրի ստեղծում, վարում և արդիականացում,

ը) սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրում,

թ) ամփոփ վիճակագրական տեղեկատվության թափանցիկության և մատչելիության ապահովում,

ժ) համագործակցություն միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ:

Վիճակագրական տեղեկությունները հրապարակվում են հետևյալ եղանակներով.

ա) **Վիճակագրական ժողովածուն (տարեգիրքը)** երկրի սոցիալ-տնտեսական վիճակն արտացոլող առավել ամբողջական վիճակագրական հրապարակումն է: Դրանում մանրամասնորեն ներկայացվում է տնտեսության կարևորագույն ճյուղերի վիճակի մասին տեղեկատվություն: Որպես կանոն, դրանում բերվում են տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և բնապահպանական ոլորտները բնութագրող բոլոր ցուցանիշները:

բ) **Վիճակագրական տեղեկագիրը** երկրի տնտեսության որևէ առանձին հատվածի (ենթահատվածի, ոլորտի) վիճակագրական դինամիկ ցուցանիշների ներկայացումն է աղյուսակային տեսքով (առանց տեքստային մասի), որոշակի պարբերականությամբ (ամսական, եռամսյակային, տարեկան):

գ) **Մամլո հաղորդագրությունները** տեղեկատվության տարածման ամենամատչելի ձևերից մեկն են: Դրանք ցուցանիշների ամփոփ համառոտագրերն են և թեմատիկ հաղորդագրությունները (ամսական և եռամսյակային պարբերականությամբ)՝ հիմնված ընթացիկ-օպերատիվ տվյալների վրա:

Հրապարակվում են նաև տեղեկատվական և վիճակագրական զեկույցներ, առանձին թեմատիկ հրատարակություններ և այլն:

Վիճակագրական տեղեկատվության սպառողները (օգտագործողները) վիճակագրական տեղեկատվությունից օգտվող սուբյեկտներն են, որոնց ցանկը չի սահմանափակվում: Այդպիսիք կարող են լինել ինչպես ՀՀ ռեզիդենտները, այնպես էլ ոչ ռեզիդենտները: Վիճակագրական տեղեկատվությունը, բացի օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներից՝ կապված վիճակագրական գաղտնիքի հետ, մատչելի են վիճակագրական տեղեկատվության բոլոր սպառողներին,:

ՀՀ ԱՎԾ բոլոր ծառայությունները և/կամ արդյունքները սպառողներին են մատուցվում անվճար տրամադրվող վիճակագրական հրապարակումների (համաձայն Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով հաստատված ցանկի), տեղեկանքների, մամլո հաղորդագրությունների, պաշտոնական գրությունների, էլեկտրոնային փաստաթղթերի, ինտերնետի և գրադարանի միջոցով:

Ոլորտին վերաբերող տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ՝ այցելելով ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային կայք՝ հետևյալ հացեով՝ www.armstat.am

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն տեղեկատվական թերթիկը վերաբերում է պետական վիճակագրության ոլորտում պետության կողմից մատուցվող ծառայություններին: Այն տեղեկատվություն է պարունակում Ազգային վիճակագրական ծառայության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, վիճակագրական տեղեկատվության տարածման եղանակների, դրանցից օգտվողների շրջանակի և այլ հարցերի վերաբերյալ:

Մայիս, 2005

Հայաստանում պետական վիճակագրական աշխատանքների իրականացումն ու համակարգումը կատարվում է Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից, որը հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող մարմին է և իր խնդիրներն իրականացնելիս անկախ է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՀ ԱՎԾ և նրա ստորաբաժանումների կառավարման բարձրագույն մարմինը ՀՀ Վիճակագրության պետական խորհուրդն է (այսուհետ՝ ՀՀ ՎՊԽ)՝ կազմված 7 անդամից, որոնք պաշտոնի նշանակվում և ազատվում են ՀՀ Նախագահի կողմից 6 տարի ժամկետով: ՀՀ ՎՊԽ նախագահը միաժամանակ ՀՀ ԱՎԾ նախագահն է:

ՎՊԽ-ն՝

- հաստատում է պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի նախագիծը,
- հաստատում է պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիրը ՀՀ պետական բյուջեի հաստատումից հետո՝ մեկամսյա ժամկետում,
- վերահսկում է պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարումը և հաստատում տարեկան ծրագրի կատարման հաշվետվությունը,
- ընդունում է վիճակագրության բնագավառի իրավական ակտեր՝ օրենքով նախատեսված դեպքերում:

ՀՀ ՎՊԽ անդամները համակարգում են վիճակագրական աշխատանքները հետևյալ բնագավառներում՝

- ժողովրդագրության, սոցիոլոգիայի և հասարակական գործունեության (Գ. Գևորգյան, հեռ.՝ 523927),
- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման (Հ. Պետրոսյան, հեռ.՝ 523217),
- ֆինանսավարկային և բանկային (Վ. Դանիելյան, հեռ.՝ 523204),
- բնապահպանության (Յ. Պողոսյան, հեռ.՝ 524618),
- ձեռնարկատիրական գործունեության կառավարման (Գ. Անանյան, հեռ.՝ 524340)
- տեղեկատվական տեխնոլոգիաների (Վ. Դավթյան, հեռ.՝ 524524):

ՀՀ ԱՎԾ-ի և ՀՀ ՎՊԽ-ի գործառույթների իրականացումն ապահովում է ՀՀ ԱՎԾ աշխատակազմը: ՀՀ ԱՎԾ աշխատակազմը ղեկավարում է աշխատակազմի ղեկավարը:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքը ներառում է նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություն, բաժիններ) և առանձնացված ստորաբաժանումները (մարզային գործակալություններ):

Կոնտակտներ.

- Աշխատակազմի ղեկավար՝
Հայրապետյան Արայիկ, հեռ.՝ 523956
- Աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝
Վարդանյան Խաչիկ, հեռ.՝ 523905
- Գլխավոր աուդիտոր՝
Մանանդյան Անահիտ, հեռ.՝ 565075
- Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն, Պողոսյան Նատալյա, հեռ.՝ 523392,
- Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին, Մարտիրոսովա Դիանա, հեռ.՝ 524326,
- Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին, Բաղդասարյան Նելլի, հեռ.՝ 524514,
- Աշխատանքի վիճակագրության բաժին, Քալանթարյան Լուսինե, հեռ.՝ 587829
- Մարդահամարի և ժողովրդագրության բաժին, Կույումջյան Կարինե, հեռ.՝ 524528,
- Գների վիճակագրության բաժին, Մարտիրոսյան Գուրգեն, հեռ.՝ 564566,
- Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժին, Գյուրջյան Գրիգոր, հեռ.՝ 580373,
- Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին, Թամազյան Մանյա, հեռ.՝ 523996,
- Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժին, Պետրոսյան Ալեքսանդր, հեռ.՝ 523863,
- Ֆինանսների վիճակագրության բաժին, Տիտիզյան Հայկուշ,հեռ.՝ 523904,
- Արդյունաբերության վիճակագրության բաժին, Անանյան Աշոտ, հեռ.՝ 523543,
- Շինարարության վիճակագրության բաժին, Պետրոսյան Լենա, հեռ.՝ 524396,
- Գյուղատնտեսության վիճակագրության բաժին, Ավագյան Արսեն, հեռ.՝ 524449,
- Տրանսպորտի վիճակագրության բաժին, Թորոսյան Գրիգորի, հեռ.՝ 521139,
- Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին, Հակոբյան Հրաչիկ, հեռ.՝ 521139,
- Բիզնես ռեգիստրի բաժին, Ասլանյան Ռոբերտ, հեռ.՝ 521139,
- Պարենային ապահովության վիճակագրության բաժին, Հովհաննիսյան Հովհաննես, հեռ.՝ 524457,
- Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին, Սաֆյան Անահիտ, հեռ.՝ 524460, ֆաքս՝ 521921,
- Վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակայնության հետ կապերի բաժին, Մուշեղյան Նարինե, հեռ.՝ 523356,
- Հասարակայնության հետ կապերի գծով գլխավոր մասնագետ, հեռ.՝ 560349,
- Իրավաբանական բաժին, Սարոյան Վարդուհի, հեռ.՝ 565075,
- Տպագրակազմարարական աշխատանքների բաժին, Գալստյան Արտավազդ, հեռ.՝ 583683,
- Վիճակագրական հաշվետվությունների հաշվառման և վերահսկման բաժին, Սիմոնյան Հարություն, հեռ.՝ 561906,
- Հաշվապահական հաշվառման բաժին, Հակոբյան Անահիտ, հեռ.՝ 564802,
- Տնտեսական բաժին, Պետրոսյան Մարգարիտա, հեռ.՝ 523889,
- Ֆինանսատնտեսագիտական բաժին, Կարապետյան Սուսաննա, հեռ.՝ 524303,
- Կադրերի բաժին, Խոջումյան Էլվիրա, հեռ.՝ 524497,
- Առաջին բաժին, Ղարիբյան Սուսաննա, հեռ.՝ 561709,
- Ընդհանուր բաժին, Սարգսյան Նոնա, հեռ.՝ 524303,
- Գրադարան, Բուռնազյան Կարինե, հեռ.՝ 523356:

ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան քաղաքի գործակալություն, Ավետիսյան Վրեժ, հեռ.՝ 557573

Արագածոտնի մարզային գործակալություն, Մովսիսյան Լևիկ, հեռ.՝ 0232 31092,

Արարատի մարզային գործակալություն, Դավթյան Լևոն, հեռ.՝ 0235 25489,

Արմավիրի մարզային գործակալություն, Սարգսյան Իշխան, հեռ.՝ 0237 60939,

Գեղարքունիքի մարզային գործակալություն, Բաղալյան Հակոբ, հեռ.՝ 0264 22709,

Լոռու մարզային գործակալություն, Մաթևոսյան Անահիտ, հեռ.՝ 0322 42568,

Կոտայքի մարզային գործակալություն, Դավթյան Վահագն, հեռ.՝ 0224 23850,

Շիրակի մարզային գործակալություն, Մալխասյան Վարդան, հեռ.՝ 0312 34918,

Սյունիքի մարզային գործակալություն, Գրիգորյան Վլադիմիր, հեռ.՝ 0285 63326,

Վայոց Ձորի մարզային գործակալություն, Ղազարյան Առուշան, հեռ.՝ 0281 22371,

Տավուշի մարզային գործակալություն, Աչինյան Աիդա, հեռ.՝ 0263 32421: